

Սակաւաթիւ են նաեւ ժԹ. դարում ընդօրինակուած ձեռագրերը: 1801 թ. եւ 1826 թ. Յովհաննէս Պոլսեցին ընդօրինակում է Պետրոս Բերթումեանի Քարոզգիրքը (ՄՄ 6576), 1853 թ. Յարութիւն Թիֆլիսցին՝ Ժողովածոյ (ՄՄ 5357): 1848/9 թթ. միթարեան հայերից Ներսէս վրդ. Սարգիսեանը, այցելելով Լիմ եւ Կտուց անապատները, ընդօրինակում է Սարգիս Կունդի Աւետարանական մեկնութիւնները՝ «Մեկնութիւն Ղուկասու եւ Յովհաննու» (Վնտ. 687 /Հմր. 1350), Յովհան Ոսկեբերանի երկերը (Վնտ. 687 /Հմր. 1350) եւ Եկեղեցու հայրերի գրուածքներից այլ ընտիր երկեր՝ «Հաւաքումն բանից նախնեաց» խորագրով (Վնտ. 678 /Հմր. 305)²⁰:

Կտուցի Աբ. Կարապետ վանքը, ինչպէս նաեւ Վանայ լճի միւս կղզիների՝ Աղթամարի եւ Լիմի վանքերը, եղել են թէ՛ ձեռագրաստեղծման, թէ՛ ձեռագրապահպանման խոշոր կենտրոններ: Անշուշտ, Կտուցում, ինչպէս նաեւ հայկական գրչութեան այլ կենտրոններում ստեղծուել են աւելի մեծ քանակով ձեռագրեր. սրանց մի մասը կորել, ոչնչացուել են տարաբնոյթ աղէտների ու պատերազմների հետեւանքով: Զգալի թիւ են կազմում 1915 թ. եղեռնակից օրերին կորած ձեռագրերը: Թէեւ Կտուցից մեզ հասած ձեռագրական ժառանգութիւնն աւելի քիչ է, քան Աղթամարինը եւ Լիմինը, այնուամենայնիւ, այդ ձեռագրերը մեր մշակութային անգին եւ անգնահատելի գանձերն են:

²⁰ Մայր Յուդայի հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միութարեանցի վեցերորդ, հտ. է, կազմ. Ս. Մեմենեան, 1996 թ., ձեռ. թիւ 687, հմր. 1350, էջ 667-674 (թերթ՝ 346, թուղթ, 23x36, միասին, շղագիր):

ԳԻՐՔԸ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Սուսանուա Յովհաննիսեան

Թումանեանը հայ ամենաընթերցասէր գրողներից է, գրքի, գրականութեան եւ հրատարակագրութեան վրայ մեծ ազդեցութիւն թողած հեղինակ: Եթէ Մ. Լերմոնտովը չաւարտեց Մոսկուայի համալսարանը, Լ. Տոլստոյը՝ Կազանինը, ապա Թումանեանը չաւարտեց նոյնիսկ Ներսիսեան դպրոցը: Ուսումնառութիւնը կիսատ թողած բանաստեղծը հէնց գրքի շնորհիւ, գիտական ու գեղարուեստական ընթերցանութեամբ ընդլայնեց իր մտահորիզոնը, դարձաւ Բրիւսովի խօսքերով՝ «ինքնակիրթ» եւ մեր ազգային մշակոյթի պատմութեան մէջ մտաւ իբրեւ հրատարակախօս, քննադատ, գիտնական ու, թէեւ անաւարտ, սակայն պատմաբանասիրական ուսումնասիրութիւնների, քաղաքակրթութեան ու մշակութաբանութեան, հայ գրականութեան եւ ազգային պատմութեան համար արժէքաւոր ծրագրային հիմնարար յօդուածների հեղինակ: Գրողի աշխատութիւնները, նոյնիսկ բանաւոր գրոյցներն ու նամակները վկայում են բազմակողմանի զարգացած մարդու լայն մտահորիզոնի մասին:

Գրքի նկատմամբ Թումանեանի սէրը վիթխարի էր. ապացոյցն իր կեանքի օրօք 10 000 միւսեր գրականութիւն կազմող գրադարանն էր: Այսօր պահպանուել եւ գրողի թանգարանում պահուում է շուրջ 8000 գիրք: Անհետ կորած մօտ 2000 գրքերի զգալի մասը ժամանակին բռնագրաւուել է ոստիկանների կողմից նրան ձերբակալելիս, մի մասը ինքն է նուիրել եւ չի կարողացել նոր օրինակ գտնել, մի որոշ մասն էլ չի պահպանուել տարբեր պատճառներով: Երբ Թումանեանը դուրս եկաւ հայրական տնից, իր հետ քաղաք էր բերել

մէկ գիրք՝ Խաչ. Աբովեանի «Վէրք Հայաստանին» եւ «Հիւսիսափայլ» ամսագրի մէկ համար: Գրողն ինքը խոստովանում է. «18 տարեկան էի դարձել եւ միայն մի քանի գիրք էր անցել ձեռքս, էն էլ մեծ մասամբ պատահով»¹: Եւ ընդամէնը երեք տասնամեակում, ազգային-հասարակական հոգսերով գերծանրաբեռնուած կեանքի ընթացքում նա ձեռք բերեց մեծ ու արժէքաւոր գրադարան: Համեմատութեան համար ասենք, որ Լ. Տոլստոյի Եասնայա Պոլեանայում պահուում է շուրջ 16.000 գիրք, որ ձեռք է բերել ապահովուած Տոլստոյների ազնուական տոհմի մի քանի սերունդ, իսկ Թումանեանը միայնակ կազմեց իր գրադարանը: Այն սիրով, յատուկ խնամքով եւ ընտրութեամբ ձեռք բերուած կովկասագիտական, հայագիտական, արուեստաբանական, պատմագիտական, փիլիսոփայական եւ այլ բնագաւառների գրքերի հարուստ հաւաքածոյ է տարբեր լեզուներով:

Բանաստեղծի գրադարանը արժէքաւոր է մի շարք առումներով: Գրքերի ընտրութիւնը վկայում է ընթերցող Թումանեանի ճաշակի, նախասիրութիւնների, հետաքրքրութիւնների լայն շրջանակի մասին: Այստեղ կարելի է հանդիպել հին աշխարհին, մարդու ծագումնաբանութեանը, աստուածաշնչեան մարգարէութիւնների պատմութեանը, Յովհաննու Յայտնութեանը վերաբերող ուսումնասիրութիւնների², աշխար-

¹ Յովհաննէս Թումանեան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով. ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., (Թումանեան, ԵԼԺ) հտ. 7, Երեսուն, 1995, էջ 226: Այսուհետեւ՝ ԵԼԺ, հատորն ու էջը կը գումարու տեքստում:
² Տե՛ս Գ. Մորտիլե, А. Мортилье, Дни исторической жизни: Происхождение и древность человека, пер. с французского, СПб., 1903, 575

Հագրութեան ու երկրագիտութեան, կենդանական աշխարհը ներկայացնող, «Գիտութիւն եւ կեանք», «Կեանք բոլորի համար» Ռիգայում, Պետերբուրգում եւ այլուր հրատարակող գիտական մատենաշարերի³, կովկասագիտութեան⁴ բանահիւսութեանը, բանասիրութեանը⁵, ժամանակի մշակութային կեանքում տղամարդու եւ կնոջ փոխարարներութիւններին⁶, ազգագրութեանը, համաշխարհային քաղաքակրթութեանը եւ այլ բազմաբնոյթ ոլորտներին վերաբերող Գ. եւ Ա. Մորտիլէների, Ն. Մորոզովի, Պ. Մուրատովի, Ս. Մուսինի, Լ. Տոլստոյի, Ի. Տուրգենեւի, Ա. Չեխովի, Ֆ. Դոստոեւսկու, Ա. Պուշկինի, Ն. Գոգոլի հեղինակած գիտահետազոտական ժողովածոների ու բազմաբնոյթ այլ գրքերի: Ռուսերէն գրքերի թիւը գրողի գրադարանում անհամեմատ շատ է հայերէնով գրականութիւնից: միայն «Յովհաննէս Թումանեանի անձնական գրադարանը Երեւանում» գրքի երկրորդ հատորում (Երեւան, 1989) Ավարդ Հայրապետեանը նկարագրել է 5200-

-ից աւելի ռուսերէն գրքեր (3700 անուն): Հայերէն գրքերը կազմում են 2400 միաւոր (2042 անուն), իսկ օտար լեզուներով՝ 529 միաւոր (430 անուն):

Գրադարանն ամփոփում է այն բոլոր արժէքաւոր գրքերը, որոնք լոյս են տեսել իր ժամանակներում: Բանաստեղծը գրականութիւնը գետեղել էր 12 պահարանում, որոնցից իւրաքանչիւրը յատկացրել էր մի բնագաւառի: Առաջին պահարանում գետեղուած էր Արեւելքի մասին գրականութիւնը: Այդ պահարանը կոչուած էր «Իլեա Մուրոմեց», քանի որ այդ երկի թարգմանութեան հոնորարով էր գնել այն: Երկրորդ պահարանը յատկացրել էր բանահիւսութեանը, 3-րդը՝ բնական գիտութիւններին, 4-րդը՝ ռուսաց պատմութեանը, 5-րդը՝ հայագիտութեանը, 6-րդը՝ ընդհանուր պատմութեանը, 7-րդը՝ օտարալեզու գրականութեանը, 8-րդը՝ ռուսերէն գեղարուեստական գրականութեանը, 9-րդը՝ կովկասագիտութեանը, 10-րդը՝ հայ գեղարուեստական գրականութեանը, 11-րդը՝ փիլիսոփայութեանը, մանկավարժութեանը ու բժշկութեանը եւ այլն, իսկ 12-րդը՝ արուեստաբանութեանն ու մշակութաբանութեանը: Մի առանձին պահարան էլ յատկացուած էր բառարաններին: Բանաստեղծը գնում էր ինչպէս եւրոպական, այնպէս էլ արեւելեան լեզուների (պարսկերէն, արաբերէն, սանսկրիտ եւ այլն) բառարաններ, մշտապէս թերթում էր գրանք, իսկ թարգմանութիւններ կատարելիս օգտուած, ստուգում, ճշտում գիտեցածը: Նրա սեղանի գրքերից էին Պոլսում, Վիեննայում, Վենետիկում, Մոսկուայում, Թիֆլիսում եւ այլուր լոյս տեսնող ժամանակի հայագիտական բոլոր հանդէսները, Մխիթարեան միաբաններից Քաջունի Մանուէլի գիրքը, Հայկազեան, Վ. Վ. Դալի եւ Վ. Վ. Ռադլովի (քառահատոր) բառարանները: Ինչպէս վկայում է դուստրը՝ Նուարդ

стр.: Н. Морозов, Пророки: «История возникновения библейских пророчеств, их литературное изложение и характеристика», М., 1914, изд-во Сытина, 312 стр., Գոյնի հեղինակի Откровение в грозе и буре: История возникновения Апокалипсиса, СПб., изд-во Саблина, 1907, 322 стр.

3 St'u П. Муратов, Образы Италии, М., 1911-1912, երկհատորեակ. С. Мусин, Человек и земля,- «Наука и жизнь», Рига, Муганская степь,- «Природа и население», под общей ред. П. П. Архипова, Тифлис, 1912 (պահպանուել է 3-րդ պրակը). Животный мир Мугани,- «Москва и ее жизнь», сост. Роман Кумов, СПб., Серия «Жизнь для всех», 1914.

4 St'u Н. Н Муравьев, Грузия и Армения. СПб., 1848 (3 փատոր). Գոյնի, Война за Кавказом в 1855 году, СПб., 1877.

5 Музеус, Собрание немецких народных сказок, М., 1906.

6 Мужина и женщина: Их взаимные отношения и положение, занимаемое ими в современной культурной жизни, СПб., 1911 (պահպանուել է 2-րդ փատորը):

Թումանեանը, «մի բառի համար քսան բառարան էր բաց անում»⁷:

Թումանեանն ինքն է կազմել իր գրադարանի առաջին գրացուցակը՝ այբբենական կարգով գրանցելով գրքերը յատուկ գրքամատենաներում: Յետագայում այդ գործը շարունակել է նրա դուստրերից Արփիկը՝ ըստ տպագիր երկերի նկարագրութեան ժամանակին կիրառուող միասնական կանոնների: Թումանեանն ունէր իր գրադարանի կնիքը, որով կնքուած են բոլոր գրքերը: Նա ունեցել է նաեւ երկու տարբեր չափսերի մատենանիշներ, որոնք ձեւաւորել էր նկարիչ Գարեգին Երիցեանը: Դրանցից փոքրի վրայ բանաստեղծը սեւ թանաքով գրել է գրքի գոյքահամարը, իսկ միւսը, որ նախորդի կրկնակի լայնքն ունէր, գրքի մասին տեղեկութիւններ գրանցելու համար էր: Գրողը ըստ յաջորդականութեան նշել է՝ հեղինակ, վերնագիր, հրատարակութեան վայր ու թիւ, տպագրիչ, հատոր:

Գրադարանի 550-ից աւելի գրքերում նրա՝ մատիտով կատարած գրառումները բացայայտում են ռուսումնասիրող Թումանեանին: Յատկապէս այդ գրքերը մատնանշում են գրողի հետաքրքրութիւնների ոլորտները եւ բացայայտում, թէ բանաստեղծը ինչ վերաբերմունք է ունեցել տեքստի, հեղինակի, ստեղծագործութեան նկատմամբ: Դրանք փաստերի ճշտումներ են, գնահատումներ եւ իր համար հետաքրքրութիւն ներկայացնող հատուածներ: Այդ գրառումները վկայում են գրողի մանրակրկիտ աշխատանքի մասին եւ չափազանց կարեւոր են նրա ստեղծագործական լաբորատորիան հետազօտողների համար: Բազմապիսի գծանշանները, բացականչական նշանները, առանձին ներդիր թերթիկների վրայ արուած դիտողութիւնները, արծար-

ծած մտքերը, ընդգծումներն ու նշումները հիմնականում կատարուած են բանահիւսական հրատարակութիւնների վրայ (մասնաւորապէս՝ Հայ ժողովրդական հեքիաթների 10 պրակների (Թիֆլիս, 1895), Տ. Նաւասարդեանի «Հայ ժողովրդական աւանդութիւնները» (Երեւան, 1886), Գ. Յովսէփեանի «Ռոստոմ Զալը» (Թիֆլիս, 1905), «Հազար ու մի խաղը» (Վաղարշապատ, 1903-1905), Հ. Արզանեանի «Հայկական առածներն ու աւանդութիւնները» (Պետերբուրգ, 1857), Եր. Լալայեանի «Մարգարիտներ Հայ բանահիւսութեան» (Թիֆլիս-Վաղարշապատ, 1914-1915) աշխատութիւնների եւ բազմաթիւ այլ գրքերի էջերում: Բանաստեղծի գրառումները պահպանուել են նաեւ պատմագիտական երկերում, մասնաւորապէս՝ Զաքարիա Քանաքեռցու, Մ. Թաղիադեանի, Մ. Չամչեանի, Հեթում պատմիչի, Առաքել Դաւրիժեցու եւ այլոց գործերում: Բազմաթիւ են թումանեանական նշումները Մխիթար Գօշի, Վարդան Այգեկցու, Նահապետ Քուչակի, Նաղաշ Յովնաթանի, Խաչատուր Աբովեանի, Հոմերոսի, Նիցշէի եւ այլ հեղինակների տարբեր հրատարակութիւններում: Որոշ գրքեր այնքան հարուստ են նշումներով, որ դարձել են եւ դեռ կարող են դառնալ առանձին հետազօտութեան նիւթ, ինչպէս օրինակ՝ Աբովեանի «Վէրքը», Էմինեան ազգագրական ժողովածոյի հատորները, Շեքսպիրի «Արքայ Լիրը», «Համլետը», «Մակբեթը», «Ռոմէոն եւ Զուլիետը», Սայաթ-Նովայի «Երգերը», «Ազգագրական Հանդէսը», Լէօի «Դաւիթ եւ Մհերը»: Քիչ չեն պոէտի գրառումները նաեւ ռուսերէն հրատարակութիւններում (Պ. Բուդակով, «Сравнительный словарь турецко-татарских наречий», «Армянский вестник», «Записки Кавказского отдела Императорского географического общества», «Кавказский сборник», «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» եւ այլն):

7 Նուարդ Թումանեան, Յուշեր եւ գրոյցներ, Երեւան, 2009, էջ 65: Այսուհետեւ՝ ՅԶ, էջերը կը ճշտեն տեքստում:

Նուարդ Թումանեանը յիշում է. «Հայ պատմիչների գրքերը, դրանց լաւագոյն հրատարակութիւնները իր գրադարանի զարդն ու գանձն էին... յաճախ էր կարդում ու ոգեշնչւում Փաւստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշէի եւ յատկապէս Խորենացու գրքերով: Շատ էր կարդում նաեւ Հայ ժողովրդի պատմութեան ծանր դրուագները, աղէտները պատկերող պատմիչներին, ինչպէս Կիրակոս Գանձակեցի, Արիստակէս Լաստիվերցի: Միջնադարեան գրականութիւնից ամէնից աւելի կարդում էր պանդխտութեան երգերը, հայկական տաղերն ու շարականները, յատկապէս Ներսէս Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Կոստանդին Երզնկացու, Գրիգոր Աղթամարցու, Նահապետ Քուչակի բանաստեղծութիւնները» (ՅԶ, էջ 64): Գրողի դասեր հաւաստիացմամբ. «սիրում էր կլասիկներին եւ գնում էր նրանց շքեղ հրատարակութիւնները: Նրան հետաքրքրում էին յատկապէս կովկասագիտութեանը, Ֆոլկլորին, արեւելքի պատմութեանը, բնագիտութեանը վերաբերող հազուադիւս գրքերը: Ռուսական պարբերականներից ստանում էր «Русское богатство», «Мир божи́й», «Русская мысль», «Вестник Европы», «Былое» հանդէսները» (ՅԶ, էջ 62):

Բանաստեղծի գրասեղանին յաճախ կարելի էր տեսնել Հերգերի ժողովրդական երգերի ժողովածոն: Կարդում էր Իրանի անգլիական դիւանագիտութեան ներկայացուցիչ Ջէյմս Մորիերի «Հաջի բաբայի արկածները» (հեղինակը 1808-1809 եւ 1810-1816 թթ. ճանապարհորդել է Հայաստանում):

Պաշտում էր յունական գիցաբանութիւնն ու գրականութիւնը: Պրոմէթէոսին համեմատում էր վրաց Ամիրանիի եւ Հայ Արտաւազդի ու Մհերի հետ: Հոմերոսի գրքից Թերսիդէսի նկարագրութիւնը կարդում էր մեծ ոգեւորութեամբ: Բայրոնի, Պիեռ Ժան Բերանժէի, Յրիգրիխ Ռիւկեր-

տիի, Լիւդվիգ Ուլանդի երկերից գնում էր զանազան հրատարակութիւններ՝ ե՛ւ ռուսերէն, ե՛ւ օտար լեզուներով եւ կարդում էր բառարանների օգնութեամբ: Մտադիր էր Բերանժէին թարգմանել՝ համեմատելով նրա երկերի ֆրանսերէն եւ ռուսերէն հրատարակութիւնները: Սիրում էր Չելտովի պատմութեանը, յատկապէս՝ «Ձիու ազգանունը», «Կաշտանկան»: Սիրում էր Մարկ Տուենի հումորը եւ շուէգ կին գրող Սելմա Լագերլեօֆին:

Առհասարակ Թումանեանին դուր էին գալիս այնպիսի գրքեր, որոնցում իշխում էր հումորը: Արեւելքի գրողներից նախընտրում էր Յիրզուսուն, Խաքանիին, Նիզամուն, Խալիլին, Հաֆեզին, Սաադին, Ռուսին: Նրա վրայ շատ է ազդել Վ. Շչեգլովի «Պուշկինի մենամարտն ու մահը» գիրքը (ՅԶ, էջ 150):

Օտար հեղինակներից ընթերցում էր հիմնականում այն գրողներին, որոնց ստեղծագործութիւնները համահունչ էին իր գրական նախասիրութիւններին: Կարդում էր նրանց հիմնական, ընտիր երկերը: Սիրում էր անգրագառնալ Պուշկինի, Լերմոնտովի, Տոլստոյի, Կոլցովի, Շեքսպիրի, Լոնգֆելլոյի, Գէօթէի, Հայնէի երկերին, ուսումնասիրում էր տարբեր ժողովուրդների դիւցազնավէպերը, աւանդութիւններն ու հեքիաթները, նախընտրում էր կարդալ այն հեղինակներին, որոնց ստեղծագործութեան աղբիւրը ժողովուրդն էր:

Գրողի տան իւրաքանչիւր այցելու տպաւորւում էր նրա անձնական գրադարանով: 1908 թ. մայիսի 4-ին առաջին անգամ Տէրեանը գնում է Թումանեանի՝ Բեհ-բուլթեան փողոցի վրայ գտնուող բնակարանը՝ յայտնի «Վերնատունը», որպէսզի բանաստեղծից վերցնի «Մուրմեցի իշխանը կուռն է Վլադիմիր իշխանի հետ» երկի թարգմանութիւնը: Երիտասարդ պոէտի յիշողութեան մէջ անջնջելի հետք է թողնում յատկապէս Թումանեանի աշխա-

տասնենակը, որը տպաւորւում է հազուադիւս գրքերով լի գրապահարաններով: «Մտնում եմ մի շքեղ կաբինետ,- պատմում է Տէրեանը,- ուր երեք շկաֆ կայ եւ մի գրքակալ՝ լիքը գրքերով: Կաբինետը ճաշակաւոր է եւ տպաւորիչ, մանաւանդ որ չես սպասում մի այդպիսի բանի հանդիպելու հայ գրող-բանաստեղծի մօտ»⁸:

Վարդգէս Ահարոնեանի ընկալմամբ «Յուվ. Թումանեանի տունը մի փոքրիկ թանգարան եւ մի հարուստ մատենադարան էր... Թումանեանն ունէր իր սիրած օտար հեղինակների գործերի ոչ միայն հայերէն թարգմանութիւնները, այլեւ բնագրերը. ռուսերէն Պուշկինի եւ Տոլստոյի կողքին կային անգլերէն Շեքսպիրը եւ Լոնգֆելլոն, գերմաներէն Գէօթէն եւ Հայնէն, իտալերէն Դանտէն եւ Իսպաներէն Սերուանտէսը» (Ընդգծումը մերն է - Ս. Յ.)⁹: Նա գրում է. «Ամէն մէկ հայի յատուկ է գրեթէ բնագրական սէրը դէպի գիրքը, դէպի տպագրուած թուղթը: Յովհ. Թումանեանի մէջ այդ սէրը աւելի շեշտուած, աւելի ցայտուն կերպով էր: Թումանեանը սիրում էր գիրքը առհասարակ, նոյնիսկ իրեն անծանօթ լեզուով եւ առանձնապէս իրեն չհետաքրքրող մի նիւթի մասին գրուած գիրքը: Իր գաւազանից յետոյ իր գուրգուրանքի առարկան էր իր գրադարանը» (Ընդգծումը մերն է - Ս. Յ.)¹⁰:

Իհարկէ, յուշագիրը սխալուում է. չի կարելի սիրել այն, ինչ չի հետաքրքրում: Թումանեանին հետաքրքրում էր ամէն ինչ եւ ամէն նիւթ, պարզապէս կեանքն ու ժամանակը բաւարար չէին այդ ամէնին հասնելու, սակայն միանգամայն իրաւացի էր երեխաներից յետոյ գրադարանի նկատմամբ ունեցած գրողի վերաբերմունքի

հարցում: Գրողը մեծ դժուարութեամբ էր ձեռք բերել իր գրադարանը: Նրա դուստրը՝ Նուարդը, գրում է. «Գրքեր գնելու սովորութիւնը վաղ էր զարթնել նրա մէջ, դեռեւս աշակերտական տարիներէս: Շարունակ նոր ու նոր գրքեր էր գնում, իհարկէ, ընտրութեամբ» (ՅԶ, էջ 62):

Պոէտի պատանեկան տարիների ընկերներից Արսէն Ղլտեանը վկայում է, որ Թումանեանը «շատ էր կարդում, մշտապէս գրքեր էր հաւաքում՝ յաճախ օրուայ հացի գինը ծախսելով այդ նպատակին» (Ընդգծումը մերն է - Ս. Յ.)¹¹:

Շատերի զարմանքը, ոմանց էլ դժգոհութիւնն էր առաջացնում ամէն գնով ժամանակի լաւագոյն գրքերն ու շքեղ հրատարակութիւնները ձեռք բերելու բանաստեղծի մոլուցքը: Գրողի մեկենասները օգնում էին նրան՝ երբեմն «կշտամբելով ու դժկամութեամբ» դժգոհում էին, որ հազուադիւս գրքեր է առնում, ճոխ գրադարան կազմում» (ՅԶ, էջ 54):

Ապագայ կնոջ՝ Օլգայի հետ ծանօթութեան առաջին օրը բանաստեղծը հարցրել էր, թէ ինչ գրքեր է նա կարդացել: «Ես էլ հպարտ-հպարտ ասում էի,- պատմում է Օլգան,- Աղայեան, Պոչեան, Բաֆֆի, Մուրացան եւ այլն» (ԹժՀ, էջ 328): Նշանագրութիւնից յետոյ Թումանեանը ապագայ կնոջ հետ իր յարաբերութիւնները սկսում է՝ նրան գրքեր նուիրելով, այդ թւում՝ Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը» եւ Աբովեանի «Վէրք Հայաստանին» (ԹժՀ, էջ 332): Օլգան վկայում է. «Անկարելի է մոռանալ, թէ ինչպէս էր փայփայում իր գրադարանը: Երբ դեռ նոր էինք ամուսնացել, շարունակ նոր գրքեր էր առնում, թէեւ փողի պակասութիւն ունէինք: Յիշում եմ՝ ինչ դժուարութեամբ էր ճարում «Հիւսիսափայլի» համարները, ամէն

8 Վահան Տէրեան, Երկերի ժողովածու, հտ. 3, Երեւան, 1975, էջ 256:
 9 Վ. Ահարոնեան, Մարդը եւ բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 44:
 10 Նոյն տեղում, էջ 47:

11 Թումանեանը ժամանակակիցների յուշերում, Երեւան, 1969, էջ 278: Այսուհետեւ՝ ԹժՀ: Էջերը կը նշուեն տեքստում:

մի համարը հինգ ուղղով: Տանից բացահայելիս գրում էր՝ լաւ Աայիր երեխաներին եւ գրադարանին» (Ընդգծումը մերն է - Ս. Յ.) (ԹԺՀ, էջ 341): Մի անգամ ապրիլին՝ Չատկի տօներին, Թումանեանը Բաքուից 350 ուղղի գումար է ստանում: Կինը խնդրում է այդ գումարը տան կարիքների համար: Ամուսինը չի մերժում եւ ամբողջութեամբ տալիս է: «Չանցած մի քանի ժամ, ծայրեծայր գրքերով լցուած մի կառքով եկաւ բուհինիստական գրախանութի աշխատակցի հետ, թէ՛ էն 350-ը տուր, 30 կոպեկ էլ՝ կառքի փող...»,- պատմում է Օլգան (ԹԺՀ, էջ 341):

Թումանեանին յաճախ կարելի էր տեսնել Թիֆլիսի Ալեքսանդրեան այգու հարաւային զառիվայր փողոցում, որն իջնում էր դէպի Կուր գետը: Այդ փողոցի միակ խանութները բուհինիստական գրախանութներն էին: Նրա տարեգրութեան մէջ քիչ չեն այն օրերը, երբ յայտնի է, թէ որտեղից ու որ գրախանութից գնեց գրքեր: Այսպէս, 1919 թ. մարտի 26-ին, որոնելով հին հրատարակութիւններ, յատկապէս կովկասագիտական ու արեւելագիտական, Թիֆլիսի Պուշկինի գրավաճառանոցից գնում է Մարիա Կոնոպնիցկայայի «Սիզիֆ ու Պրոմէթէս» գիրքը, թերթում է եւ յիշում 90-ական թուականները. «Հայ գիշի, մի ժամանակ էս գիրքը շատ էի սիրում. ու մի կտորն էլ «Պոէտն ու մուսային» բնաբան գրի» (ՅԶ, էջ 197): Նոյն այդ թուին է կարդացել Գերշենգոնի «Անցեալի կերպարները» գրքից «Պուշկինի իմաստութիւնը» գլուխը:

Բանաստեղծի համար անձնական գրադարանը մի իւրօրինակ աշխարհ էր, որը խաղաղութիւն ու հոգեկան անդորր էր բերում: Նրա ընկալմամբ՝ իր կողքին ասես ապրում էին հայ եւ համաշխարհային դասականները Հին Յունաստանից սկսած մինչեւ իր օրերը, ապրում էին բոլոր ժամանակների հանճարեղ փրիստփաներն ու գիտնա-

կանները: Նրանց թւում էին Մուսերը՝ «Գեղանկարչութեան պատմութեան» եռահատորեակով, Կարիերը՝ «Արուեստը մարդկութեան մշակոյթի եւ իդէալների ընդհանուր զարգացման համատեքստում» աշխատութեան հինգհատորեակով, Վեորմանը՝ «Բոլոր ժամանակների եւ ժողովուրդների արուեստի պատմութիւն» գրքի բազմահատորեակով, Ֆուքսը («Բարբերի պատկերազարդ պատմութիւն»), Գրաբարը («Ռուս արուեստի պատմութիւն»), Հիպոլիտ Տենը («Արուեստի ընթացումներ»), Բիւխերը («Աշխատանքը եւ ուրիշ»), Բրաուդոն («Երաժշտութեան համընդհանուր պատմութիւն»), Էլիսմանը («Յունական եւ հռոմէական թատրոնը»), Ռիտերը («Բեմական արուեստի սկզբունքները»), Բենուան՝ «Բոլոր ժամանակների եւ ժողովուրդների կերպարուեստի պատմութիւնը» գրքի 21 հատորներով: Այստեղ էին նաեւ Ուսպենսկին՝ Բիւզանդական կայսրութեան պատմութեամբ, Տուրայելը՝ Հին արեւելքի պատմութեամբ, արեւմտահայերի վիլայէթների մասին գրքերը, Էսսմանը՝ յոյների ու հռոմէացիների դիցաբանութեամբ, չինացի, ճապոնացի հեղինակները, Գետցը՝ հրէաների պատմութեամբ, Պոտտոն՝ իր բոլոր աշխատութիւններով, օտարագրի արուեստաբանները՝ Վելասկէսի, Ռաֆայէլի, Մուրիլիոյի, Ռեմբրանտի եւ այլ հանճարեղ արուեստագէտների մասին մենագրութիւններով: Գրադարանն իր հպարտութիւնն էր գրոյցների ընթացքում, երբ անհրաժեշտ էր որեւէ բանում համոզել զրուցակցին, ձեռքը մեկնում էր դէպի գրադարանի գրքերն ու ասում. «Հրէն, էնտեղ գրուած է» (ՅԶ, էջ 72): 1916 թ. օգոստոսի 24-ին Բորժոմից Յուլիկ Խանգաղեանին գրում է. «Գրադարանս շատ եմ կարօտել: Լաւ բան է: Թէեւ չեմ կարողանում կարգամբ, բայց շարունակ էնպէս է թւում, թէ էն բոլոր լաւ-լաւ գրքերը մեծ մարդիկ են, հէնց իրենք հեղինակներն են չորս կողմս շարուած ու անվերջ գրոյց են անում» (ԵԼԺ 10, էջ 250): Այս

միտքը գրեթէ բառացիօրէն արտայայտուել է 5 ամիս անց նրա յայտնի «Գրադարանս» բանաստեղծութեան մէջ.

Բազմած եմ շուրջս ԱրրաԱք ամէն օր -
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհի,
Երգում եմ, պատմում Աերդաշնակ ու խոր
Միտքն ու գաղտնիքը մահի ու կեանքի:
Ու էսպէս՝ ինձ հետ, իմ տանն ամէն օր,
Ոչ հաց եմ ուզում ինձանից, ոչ շոր
(ԵԼԺ 1, էջ 290):

Թումանեանը այն բացառիկ գրողներից է, ում համար իր գրադարանը բանաստեղծական ներշնչանքի առարկայ է դարձել: Սա նոյնպէս վկայում է, թէ որքան ուժեղ է եղել նրա գրքի պաշտամունքը: Այդ սէրը փոխանցուել էր բոլոր դաւակներին, եւ յետագայում նրանք նոյնպիսի առանձնայատուկ սիրով ու խնամքով են պահել իրենց հայրիկի անձնական գրադարանը:

1900 թ. ամենայն հայոց բանաստեղծի անունը յայտնուում է Թիֆլիսի քաղաքական անբարեյոյս անձանց «սեւ» ցուցակում: «Անբարեյոյս» Թումանեանի ոչ մի ձեռնարկ ոստիկանութեան աչքից չէր վրիպում: Այդ պահին նա գաղտնի ընկերակցութեան անդամ էր, որը հետամուտ էր ազգային-մշակութաբանական ու գրական խնդիրների արծարծման, գրանց լուծման գործնական ուղիների որոնման եւ ոչ մի քաղաքական նպատակ չէր հետապնդում: Սակայն ոստիկանութեան կասկածները յանգեցնում են խմբի անդամների մեծ մասի հետապնդումներին ու ձերբակալութեանը: 1902 թ. փետրուարի 15-ի լոյս 16-ի գիշերը խմբի անդամներից բանտարկուում են Գեւորգ Ասատուրը, Երուանդ Լալայեանը, Գեւորգ Ղարաջեանը եւ Յակոբ Յակոբեանը¹²: Նոյն գի-

շերը 10 ընդհանուր անձանքի տան վրայ հսկողութիւն սահմանելուց յետոյ նրա բնակարանում առաջին անգամ խուզարկութիւն է կատարուում՝ պահանջական վարչութեան պետի տեղակալ Կրաւչենկոյի դեկավարութեամբ: Ոստիկանները փորձում են պոէտի՝ այն ժամանակ շուրջ 2000 գիրք կազմող անձնական գրադարանում յայտնաբերել «անթոյլատրելի գրքեր»: Անձնական գրադարանում պահուող գրքերի մասին Կրաւչենկոյի հարցերին Թումանեանը պատասխանում է, որ տեղեակ չէ իր գրքերի «լեգալ» կամ «անլեգալ» լինելուն, սակայն կարողանում է շեղել խուզարկուին՝ միտումնաւոր մատնանշելով Պ. Ջարուբինի 1879 թ. Պետերբուրգում հրատարակուած «Современные социалисты-революционеры» գիրքը: Ոստիկանատանը համոզուում են, որ այդ գիրքը ամենեւին էլ արգելուած չէ, ընդհակառակը՝ գրուած է ուսուցիչական նպատակներով, եւ նրա հեղինակը կոչ է անում ոչնչացնել մատերիալիզմը: Թումանեանի՝ այդ գրքի բովանդակութեանը ծանօթ լինելը եւ հնարամտութիւնը ցանկալի արդիւնքի են յանգեցնում. գիրքը տեղ է գտնում Կրաւչենկոյի ղեկուցագրում եւ իր «փրկարար» դերն է խաղում բանաստեղծին այդ պահին չհետապնդելու գործում, առողջանալուց յետոյ էլ նրան չեն բանտարկում¹³: Այդ գրքի շնորհիւ մի որոշ ժամանակ գրողը կարողանում է իրենից հեռացնել քաղաքական մեղադրանքը: Այնուհետեւ չորրորդ քաղաքամասի պրիստաւին ներկայանալու ծանուցագիր է ստանում: Սակայն կալանաւորուելու փոխարէն ետ են վերադարձնում իբրեւ իրեղէն ապացոյց բռնագրաւուած գիրքը:

13 Տե՛ս ԹԺ, ՓԲ, Պահմորդական բաժնի գրութիւնները, թիւ 43: Փաստաթղթում գրքի հեղինակի՝ Պ. Ջարուբինի անունը աղտաւորուած է, Աշուտ Է՝ Ջուբարով: Այդ գիրքն այսօր էլ գտնուում է Թումանեանի անձնական գրադարանում. տե՛ս ԹԺ, անձնական գրադարան, պահարան 6, թիւ 123:

12 Տե՛ս Խ. Գիլմագարեան, Ս. Մանուկեան, Յակոբ Յակոբեանի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւնը, Եր., 1965, էջ 59:

Անշուշտ, բանաստեղծը ոչ բոլոր գրքերն էր հասցնում կարգալ: Թուժանեանի դուստրը վկայում է. «Քանի որ կարգալու ժամանակ քիչ ունէր, յաճախ գրքերը կարգում էր թերթերով, ձեռաց, շտապ կամ խանգարուած ընդմիջումներով: Բայց ոչ բոլոր գրքերն էր այդ ձեւով կարգում: Գրքեր կային, որ ուղղակի ուսումնասիրում էր, մի քանի անգամ էր կարգում եւ յաճախ վերադառնում նրանց: Կարգալիս փղոսկրեայ կտրիչը միշտ ձեռքին էր լինում... գրքեր էլ կային, որ պարզապէս թերթում էր, բայց այդ ձեւով էլ աւելի շատ բան էր քաղում, քան մէկ ուրիշը՝ կարգալով: Գրքի հոտառութիւն, ուժեղ բնագոյ ունէր, գիրքը կարծես թէ զգում էր, գլխի էր ընկնում: Ասում էր՝ գրքեր կան, որ թերթերով եմ կարգում, ուրիշ կերպ անհնար է, հո չի՞ կարելի բոլոր գրքերն անխտիր կարգալ» (Ընդգծումը մերն է - Ս. Յ.) (ՅԶ, էջ 62-63): Նոյնը վկայում է Վ. Ահարոնեանը. «Շնորհիւ իր սուր մտքին Յովհ. Թումանեանը հեշտութեամբ իւրացնում էր արուեստի, հասարակական գիտութիւնների եւ փիլիսոփայութեան վերաբերեալ գրքերի հիմնական գաղափարները: Եթէ շատ անգամ լրիւ չէր կարգում, թղթատելով առնում էր այդ գրքերից ինչ որ պէտք էր իրեն»¹⁴: Եւ, իրօք, նա կարողանում էր գրքերից վերցնել ամենակարեւորը: Լէօն Թումանեանի ընթերցանութեան մասին պատմում է հետեւեալ դէպքը. «Էդ տնաշէնը գիրք կարդալու զարմանալի ձեւ ունէր: Մի օր մօտն էի, խօսում էինք կովկասագիտութիւնից, մի նոր գիրք էր գնել, սեղանի վրայ տեսայ (Մայեւսկի «Անդրկովկաս»): Ասի՝ Օհաննէս, մի քանի օրով տուր տանեմ կարգամ, ետ բերեմ: Սովորաբար նա իր գրքերը տուն չէր տալիս, ինձ էս անգամ բացառութիւն արաւ, տուեց: Տարայ, սկսեցի կարգալ, տեսայ, որ թերթերից շատերը դեռ կտրուած էլ չեն: Կարգացի, մի քանի օրից եկայ մօտը: Խօսք ընկաւ էդ գրքից,

14 Վ. Ահարոնեան, ԱԶ. աշխ., էջ 49:

ասի՝ Օհաննէս, դու էդ գիրքը ո՞նց ես կարգացել, որ թերթերը դեռ կտրուած էլ չեն. բան չասաց: Զրոյցը շարունակեցինք, քիչ յետոյ խօսք գցեց էդ գրքից, հետն էլ մի կարծիք յայտնեց, որ միանգամայն նոր էր ինձ համար: Ասի՝ Օհաննէս, էդ որտեղից գիտես, թէ՛ հէնց էդ գրքիցն եմ ասում, որ տարել եմ կարգացել ու ետ բերել... Շատ ծիծաղեցինք...» (ՅԶ, էջ 63):

Ըստ Արամ Բաբայեանի՝ այդ ասելուց յետոյ, Թումանեանը տեղից վեր է կենում, մօտենում գրադարանի պահարանին եւ այնտեղից հանում է նոյն գրքի երկրորդ օրինակը, որի թերթերը կտրուած էին եւ ցոյց է տալիս Լէօնին¹⁵: Կարծում ենք՝ Բաբայեանը շփոթում է. աւելի հաւանական է, որ բանաստեղծն, իրօք, միայն թերթել էր գիրքը, սակայն կարողացել էր շատ աւելին վերցնել նրանից, քան մէկ ուրիշը, որ կարգացել էր այն ամբողջութեամբ: Գիրքը լրիւ չընթերցելն անգամ չէր խանգարում, որ գրողը վերցնէր այն ամէնը, ինչ անհրաժեշտ էր իրեն:

Բազմաթիւ են գրողի եւ նրա ժամանակակիցների կոնկրետ վկայութիւնները կարգացած գրքերի մասին. «Հէ՛յ գիղի հա՛, 1907 թուականին, շատ կարճ ժամանակում 400 հեքիաթ ուսումնասիրեցի... ո՞նց էի պարագում» (ՅԶ, էջ 294):

Յայտնի է նաեւ, թէ ինչ գրքեր է կարգացել պոէտը 12-14 տարեկան հասակում: Մինչ Զալալօղլու դպրոցում սովորելը Թումանեանը ընդամէնը գրաճանաչ էր եւ Դսեղում չէր կարող ընթերցանութեան համար հետաքրքիր գրքեր գտնել: Գրքերի աշխարհը նրա առջեւ բացուեց Զալալօղլում, երբ նա սկսեց օգտուել դպրոցի տնօրէնի՝ Տիգրան Տէր-Դաւթեանի հարուստ գրադարանից: Վերջինիս դուստր

15 Յովհաննէս Թումանեանի անձնական գրադարանը Երեւանում, մատենագիտական նկարագրութիւն, գիրք 1.- «Հայերէն գրքեր եւ պարբերական հրատարակութիւններ», Եր., 1987, էջ 23:

Վարսենիկը վկայում է, որ նրանք իրենց հայրիկի գրադարանի գրքերը կարգում էին միասին բարձրաձայն՝ 11-ամեայ Յովհաննէսի ընտրութեամբ: Վարսենիկը գրում է. «Կարգում էինք նոյնիսկ մեզ համար դժուար ըմբռնելի գրքեր: Ուտանաւորները միշտ կարգում էր Յովհաննէսը... կային նաեւ Պոլսի բարբառով գրքեր, որոնք դժուարութեամբ էինք հասկանում, օրինակ՝ Բերնարդէն դը Սեն-Պիերի «Պող եւ Վերգիլնէ», Դիւմայի «Երեք հրացանակիրներ», «Քսան տարի ետքը», «Բրաժելոն դեր-կոմսը», Էօթեն Սիւի «Գաղտնիք Փարիզում», Մերենցի «Երկունք թ դարում», «Քրիստափոր Կոլումբոս եւ Ամերիկայի գտնելը» գիրքը. արեւելահայ լեզուով՝ «Չեստերտոնի ժառանգը», «Բարդուղիմէի գիշերը», «Սուլթանի երազը», Ֆրանց Հոֆմանի «Խաւարից դէպի լոյս», Դանիէլ Դեֆոյի «Պատմութիւն Ռոպինսոնի Քուլզոն», Ֆերենալի «Գաղտնիք ինկվիզիցիայի», Ռիլի «Կոմսուհի Ուրսուլան», Բիչեր Ստոուի «Թովմաս եղբոր տնակը», Ալֆոնս Դոդէի «Թղուկը» եւ ուրիշ շատ գրքեր, կային եւս մի քանի տեսակ երգարաններ («Քնար հայկական», «Սոխակ Հայաստանի»): Բաֆֆու «Փունջը», առաջին հատորը, Աղայեանի «Երկու քոյրը», Պատկանեանի երկերը, Շահազիզի «Լեւոնի վիշտը»:

Այդ բոլորից պոէտն ամէնից շատ կարգում էր ու սիրում «Քնար հայկականը», մանաւանդ նրա մէջ տպուած Սալաթ-Նովայի տաղերը:

Բացի ուտանաւորներից, Թումանեանն առանձին սէր էր տածում դէպի գրաման. նրան շատ դուր էր գալիս Շիլլերի «Օրլէանի կոյսը»: Սիրում էր «Փորձ» ու «Հիւսիսափայլ» ամսագրերից փոքրիկ պատմութեան կարգալ, սիրում էր նաեւ հեքիաթները» (ԹԺՀ, էջ 208-209):

Եթէ Զալալօղլում Թումանեանն ազատօրէն օգտուում էր Տիգրան Տէր-Դաւ-

թեանի գրադարանից, ապա Թիֆլիսում վիճակն աւելի լուրջ էր: Կարգալու ձգտումը մեծ էր, իսկ գրքեր հայթայթելու հնարաւորութիւնը՝ սուղ: 1916 թ., յիշելով Ներսիսեան դպրոցում ուսանելու տարիները՝ «Մ. Նալբանդեանի յիշատակին» յօդուածում գրում է. «Շատերը կը յիշեն, թէ ութսունական թուականներին ինչքան քիչ էր գիրքը Թիֆլիսում, եւ ինչ դժուարութեամբ էր ընթերցանութեան գիրք ճարուում՝ թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն: Դժուար էր մանաւանդ ինձ նման օտարական մի պատանու համար...» (ԵԼԺ 7, էջ 226):

Այնուամենայնիւ, 90-ական թթ. Թումանեանն արդէն անյազ ընթերցող էր: Գրողի մոլեռանդ ընթերցասիրութեան մասին յիշատակութիւն կայ «Պոէտն ու մուսան» երկում.

Դեռ շատ վաղուց նկատեցի՛ն,
Կըռի արի՛ն, խըրատեցի՛ն,
Թէ աշխարհքի՛ն մըտիկ արա,
Շատն էլ խընդաք խեղքիս վրա...
Իսկ ես, ա՛խ, ես,
Միշտ խեղք աչապէս,
Գիշեր-ցերեկ թերթում գրքեր...
(ԵԼԺ 3, էջ 131):

Այս խոստովանութիւնը բանաստեղծն անում է ինքնակենսագրական բնոյթի մի պոէմում, որը գրուել է 90-ականների կէսին, իսկ մտայղացումը ծնուել է շատ աւելի վաղ, հետեւաբար այդ շրջանում նա արդէն համարուել է «խենթ» ընթերցող, ով գիշեր-ցերեկ գիրք է թերթում:

Թումանեանի տունը, որտեղ էլ նա լինէր, ամառանոցում, թէ առողջարանում (օրինակ՝ Աբասթուանիում), բոլոր հովեկների համար դառնում էր գրադարան: Իսկ բանտախուցը բազմազբաղ բանաստեղծի համար աւելի նպաստաւոր էր ընթերցանութեան եւ գրական աշխատանքի համար: Մետեխի բանտախուցում են գրուել «Մի կաթիլ մեղրը», «Վայրէջքը»: Իսկ Պե-

տերբուրգի բանտում զգալի ժամանակ էր յատկացնում յատկապէս ընթերցանութեանը¹⁶: Բանտախցում է կարդացել նաեւ ճապոնական ականդուլթիւններն ու հեքիաթները, որոնք ֆրանսերէնից ռուսերէն էր թարգմանել Բաշանովը: Գրքի հանդէպ սէրը ֆիզիկապէս թոյլ բանաստեղծի մտաւոր էներգիան ու հնարաւորութիւն-

ները բանտային դաժան պայմաններում անսահմանափակ ու անսպառ էր դարձրել:

Ռուսաստանից թուամենեւնէ հինգ արկղ գիրք էր բերել: Թէ՛ Մոսկուան, թէ՛ Պետերբուրգը գրողին դուր էին եկել, սակայն ամէնից շատ նրան հրապուրել էին մեծ քաղաքների բուկինիստական խանութները, եւ նա երազում էր նորից վերադառնալ այնտեղ՝ «յատկապէս գրքեր գնելու համար» (ՅԶ, էջ 99): Պետերբուրգից եւ Մոսկուայից բերած գրքերի մեծ մասը բանագիտութեանը վերաբերող ժողովածոներ էին, որոնք ընդգրկում էին նաեւ ժողովրդական բանահիւստութեան նիւթեր: «Լաւ առիթ եղաւ ինձ համար, - ասել է բանաստեղծը Կովկաս վերադառնալիս, - բուկինիստներից բաւականին լաւ բաներ եմ հաւաքել, հետո տանում եմ» (ՅԶ, էջ 99): Իսկ կինը՝ Օլգան, տխուր կատակով արձանագրել էր. «է՛, ինքը հնարաւորութիւն չունեցաւ իր միջոցներով գնալու, գոնէ էսպէս աշխարհ կը տեսնի» (ՅԶ, էջ 99): Նուարգը յաւելում է, որ հայրը «մտածում էր յետագայ տարիներին մի անգամ էլ անցնի Մոսկուա եւ Պետերբուրգ, յատկապէս գրքեր գնելու համար, բայց չյաջողուեց» (ՅԶ, էջ 99):

Թուամենեւնէ գրքեր էր կարդում նաեւ իր երեխաների համար, ընդ որում՝ ոչ միայն մանկական կամ գեղարուեստական. այդ գրքերից, մասնաւորապէս՝ Լաստիվերցու, Գանձակեցու եւ Ունհայեցու պատմութիւններից, նա բարձրաձայն հատուածներ էր կարդում երեխաների համար: Խորհուրդ էր տալիս նրանց ընթերցել հայ եւ համաշխարհային մեծ գրողների երկերը՝ Ն. Պրոբեւալսկու «Ճանապարհորդութիւն կենտրոնական Ասիայում» գիրքը եւ առհասարակ մեծ ճանապարհորդների գրքերը, հանճարեղ մարդկանց կենսագրութիւնները: Առաջարկում էր երեխաներից իւրաքանչիւրին ընտրել որեւէ հեղինակ եւ տանը գրական երկոններին հեր-

16 Պետերբուրգի բանտախցում ընթերցած գրքերի մասին (Հ. Հաւապտման, Ջրասոյզ զանգը, Ռ. Անդերսոն, Արեւելքի կործանուած քաղաքակրթութիւնների պատմութիւնը, Ն. Ա. Լէյկին, Պատմութեանը վիպակներ եւ ստեղծագործութիւններ, Լ. Փակուիոյ, Հնդկաստանի խիտ անտառներում, Օ. Շրեդեր, Համեմատական լեզուաբանութիւն եւ մանուկաբանական պատմութիւն եւ Յունական դիցաբանութիւն) տե՛ս Ս. Յովհաննիսեան, Թումանեանի դատավարութիւնը. «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2010, թիւ 1-12, էջ 358:1912 թ. յունուարի 4-ին բանաստեղծը գրում է. «Էս քանի օրը կարդում էի Լէյկինը եւ յանկարծ գտայ իմ «Գիքորին», իհարկէ, ռուս «Торговый мальчик Ванюша» վերնագրով» (Թումանեան, ԵԼԺ, հտ. 10, էջ 534): Յունուարի 10-ից 11-ը ընթերցում էր Փակուիոյի «В тры-шодбах Индии» գիրքը, որում նա աղերսներ է տեսնում Բաֆֆու ստեղծագործութեան հետ: «Շատ հետաքրքիր գիրք է նրանով, որ ինչպէս ինձ թում է, Բաֆֆին իր «Կայծերը» գրել է այդ գրքի տպատրուտեան տակ» (Նոյն տեղում, էջ 535): Լ. Փակուիոյի գրքի 257-րդ էջում Թումանեանը հանդիպում է «դումա» կամ «խումա» թոչուցի մասին առասպելին, որին անդրադարձել էր Ն. Մառը իր «Тексты и разыскания по армяно-грузинской филологии» գրքի 12-րդ հատորում (Սանկտ Պետերբուրգ, 1910): 1912 թ. մարտի 7-ին Թումանեանը Ղազարոս Աղայեանի որդուց՝ Մուշեղից, ստացել էր նրա հեղինակած «Словарь правильных ударений» գիրքը (Նոյն տեղում, էջ 144): Թումանեանը բանտում մեծ չափով ընթերցել էր ուսումնասիրել էր յատկապէս արեւի ու լուսնի մասին առասպելներն ու ասանդութիւնները՝ Դեմուցիի (կամ Դումուգա) եւ Իշտարի (կամ Իստարի)՝ մեռնող եւ յարութիւն առնող աստծու մասին առասպելները՝ Ռ. Անդերսոնի թարգմանութեամբ Բիտոնի «Արեւելքի կործանուած քաղաքակրթութիւնների պատմութիւնը» գրքի մուկովեան հրատարակութիւնից (Р. Андерсон, История вымерших цивилизаций Востока, М., 1898): Մանրամասները տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա-Երեւան, 2010, թիւ 1-12, էջ 358-363:

թով կարդալ¹⁷: Թուամենեւնէ խորհրդով են նրա զաւակները կարդացել գերմանացի կենդանաբան Ալֆրեդ Բրեմի «Կենդանիների կեանքը» վեցհատորեակի նիւթերը, Մորիս Մետերլինկի «Մեղունների կեանքը» գիրքը: Երեխաներին յանձնարարում էր նաեւ կարդալ Վերածնութեան շրջանի արուեստագէտների մասին եւ նրանց գրքերը: Աստուածաշունչը գրասեղանի մշտական գրքերից էր, «որի խորութիւնն ու արուեստը գնահատում էր շատ բարձր» (ՅԶ, էջ 67): Հաճոյքով էր ընթերցում նաեւ Գարեգին Սրուանձտեանի «Համով-հոտովը»:

Երեխաների համար գրքեր գնելիս մեծ ուշադրութիւն էր դարձնում գրքի տեսքին եւ տպագրութեան որակին: Վ. Ահարոնեանը պատմում է. «Մի օր հին գրքեր վաճառողներից մէկի մօտ տեսել է գեղեցիկ տպագրուած եւ սիրուն կազմով, բայց իրեն համար անհասկանալի լեզուով մի խոշոր գիրք: Գնել է, թեւի տակ դրել եւ տուն բերել: Իր բազմաթիւ զաւակները հայ եւ ռուս դպրոցներում օտար լեզուներ են սովորում: Անշուշտ մէկն ու մէկը կը հասկանայ այս գրքի լեզուն: Տուն է բերել եւ կանչել երեխաներին. «Մուշեղ, Արտիկ, Արեգ, եկէք տեսէք այս ինչ գիրք ա»: Արեգը՝ թէ. «Սա գերմաներէն աշխարհագրութեան գիրք է: Ինչո՞ւ ես առել»: «Տեսայ մեծ գիրք ա, լաւ կազմուած, գինն էլ էժան. ասացի՛ առնեմ, տուն տանեմ. մէկն ու մէկիդ պէտք կը գայ մի օր»¹⁸:

Կոմիտասի սաներից երաժիշտ եւ նկարիչ Աղաւնի Մետրոպեանի հետ ծանօթութեան օրը՝ 1920 թ. աշնանը, թուամենեւնէ դժգոհել է մանկական գրքերի գեղարուեստական ձեւաւորման համար նկար-

րիչների սակաւութիւնից: Նա մեծ կարեւորութիւն էր տալիս մանկական գրքերի պատկերազարդմանը: Դիմելով Աղաւնուն՝ բանաստեղծը ասել է. «Եթէ մանկական գրականութեամբ պարապէիք, ինչքան մեզ պէտք պիտի գայիք: Ի՞նչ լաւ գրքեր կարող ենք հրատարակել մանուկների համար, եթէ այդ գործին նուիրուած գրողներ ու նկարիչներ ունենանք» (ՅԶ, էջ 235): Իսկ երբ պատրաստում էր «Մանկական գրագարան» մատենաշարով իր մանկական երկերի հրատարակութեանը, գրողը հրաւիրում է մի քանի նկարիչներին՝ Ռոտտերին, Գ. Երիցեանին եւ Վ. Ախիկեանին: Յայտնի է, որ իշխանուհի Մարիամ Թուամենեանն իր միջոցներով է հրատարակել այդ մատենաշարի պատկերազարդ գրքոյկները՝ 1908 թ. հիմնադրած «Իշխանուհի Մարիամ Թուամենեան եւ ընկերութիւն» հրատարակչութեան միջոցով: Հէնց այդ ընկերութեան ջանքերով հայ գրական կեանքում դրուեց աննախադէպ ու բացառիկ գեղարուեստական բարձրաձայն հրատարակութիւնների հիմքը:

Բանաստեղծն իր գրքերը պահում էր խնամքով եւ փորձում էր ոչ ոքի չտալ: Նա իր աշխատասենեակի պատին փակցրել էր՝ «Խնդրում եմ չծխել եւ գիրք չխնդրել»: Ինքը չէր ծխում, սակայն գրասեղանի վրայ միշտ դրուած էր մոխրաման հիւրերի համար: Որովհետեւ ամէնքին թւում էր, թէ տանտիրոջ խնդրանքը իրենց չի վերաբերում: Նա չէր սիրում, երբ գրքերը գրադարանից բացակայում էին, բայց երբ խնդրում էին, մերժել չէր կարող, մինչդեռ գիտէր, որ դրանք երբեմն տանում ու չեն վերադարձնում կամ ուշացնում են: Աւելին, գրքերը յաճախ ինքն էր առաջարկում իր տան այցելուներին եւ նուիրում էր ոչ միայն իր երկերը: Թուամենեանն առհասարակ սովորութիւն ունէր արժէքաւոր գրքերից մի քանի օրինակ գնել՝ նուիրելու համար: Երուանդ Օտեանի «Առաքելութիւն մը ի Մապլվար» գիրքն այնքան

17 Յայտնի է, որ իր երեխաների համար կազմակերպած գրական մի երեկոյին Արեգը ընտրել էր Դումուցիի կեանքն ու ստեղծագործութիւնը, Նուարդը՝ Բայրոնին (ՅԶ, էջ 158):
18 Վ. Ահարոնեան, Աշխ., էջ 47-48:

էր հաւանել, որ գրախանութներէն մէկում հանդիպելով, զնեւ էր 5-6 օրինակ, երկուսն իր գրադարանի համար, երեքը՝ նուիրելու: Երբեմն այդ գրքից հիւրերին հատուածներ էր կարդում: Մի անգամ էլ գրավաճառներից մէկի մօտ տեսել էր Սմբատ Շահազիզի «Ազատութեան ժամերը», զնեւ էր 10 օրինակ եւ նուիրել: «Սա հազուագիւտ հրատարակութիւն է, ինչպէ՞ս է ընկել էստեղ» (ՅԶ, էջ 235):

1909 թ. աշնանը պարսից դեսպանը, ով հրաշալի տիրապետում էր ֆրանսերէնին ու ռուսերէնին, պատրաստելով մեկնել Պետերբուրգ, կամենում է թիֆլիսում հանդիպել իր վաղեմի ծանօթ պարսկահայ հարուստ վաճառական Համբարձում Թումանեանին¹⁹, սակայն թիւրիմացաբար յայտնւում է Յովհաննէս Թումանեանի բնակարանում: Բանաստեղծը նրան հրաւիրում է աշխատասենեակ, ուր ծառայում է զրոյց պարսից գրականութեան մասին: Վ. Ահարոնեանը պատմում է. «Յովհ. Թումանեանի շեմքը կոխելուն պէս հիւպատոսը գլխի է ընկնում, որ սխալ տեղ է եկել. ոչ այս տունն է վաճառականի տան նման, եւ ոչ էլ իրեն ընդունող տանտէրը վաճառականի երեւոյթ ունի»²⁰: Հիւպատոսը հրաժեշտին, նկատելով Թումանեանի հետաքրքրութիւնը պարսից գրականութեան նկատմամբ եւ յատկապէս Ֆիրդուսու արուեստի՝ նրա իմացութիւնը, խոստանում է Պարսկաստանից ուղարկել Ֆիրդուսու «Շահնամէի» պարսկերէն շքեղ հրատարակութիւնը՝ վստահեցնելով, որ այն նոյնիսկ Պարսկաստանում հազուագիւտ գիրք է, իսկ թիֆլիսում դժուար թէ գտնուի: Այդ պահին Թումանեանը պահարանից հանում է «Շահնամէի» շքեղ հրատարակութիւնը եւ նուիրում

հիւպատոսին: «Որտեղի՞ց է Ձեր ձեռքն ընկել Ֆիրդուսու բնագիրը», - ապշահար հարցնում է հիւպատոսը: «Այս մէկ օրինակը Ձեզ նուէր, ես մէկն էլ ունեմ», - պատասխանում է Թումանեանը: Բանաստեղծը յիշում է. «Սկզբում մերժեց, բայց երբ պահարանից հանեցի երկրորդ օրինակը, նա զարմացաւ, վրան մակագրեցի ու նուիրեցի» (ՅԶ, էջ 66):

Նուիրում էր անգամ այնպիսի գրքեր, որոնք նրա համար շատ արժէքաւոր էին եւ մի օրինակից: Նուարդը յիշում է, թէ ինչպէս դերասանուհի Օլգա Մայսուրեանը, բանաստեղծի գրադարանում տեսնելով թատրոնի մասին հետաքրքիր գիրք, խնդրում է ընթերցելու համար, Թումանեանը նուիրում է, եւ անհանգստացած սկսում է որոնել նոյն գիրքը այնքան, մինչեւ ձեռք է բերում (ՅԶ, էջ 64):

Յաճախ անձնական բարեկեցութեան հաշուին թէ՛ այլ հեղինակների գրքերը, թէ՛ իր երկերի հրատարակութիւնների գրեթէ ողջ տպագրանակը նուիրելու Թումանեանի սովորութիւնը յայտնի էր ամէնքին: 1903 թ. գրողի «Բանաստեղծութիւններ» ժողովածուն տպագրուել էր թիֆլիսում նրա մեկնասաների՝ իշխանուհու եւ Փիլիպոս Վարդազարեանի ջանքերով՝ բանաստեղծի նիւթական վիճակը բարելաւելու, նրա ընտանիքը պարտատէրերի անհանգստութիւններից ազատելու նպատակով: Գրքի 1200 օրինակից միայն 400-ն է վաճառում իշխանուհին: Ստացուած 2163 ռուբլու մի մասը յատկացնում է տպագրական ծախսերը ծածկելուն, միւս մասը ամբողջութեամբ տրամադրում է հեղինակին: Նա մտադիր էր գրախանութներին յանձնուած մօտ 800 օրինակի գումարն էլ յատկացնել բանաստեղծին, սակայն... իշխանուհին վկայում է. «Մի շաբաթ հագիւ էր անցել, որ Թումանեանը մտել էր գրախանութները, վերցրել էր ժողովածոյի օրինակներ ու ձրի բաժանել էր արան-արան: Չբաւականանալով գրանով՝ նա

19 Այդ շրջանում Թեհրանում ապրում էր մի հարուստ գերդաստան, որն այնպիսի հեղինակութիւն ունէր Պարսկաստանում, որ կառավարութիւնը հէճ արան էր վստահել պետական գրանք կտրելու պատասխանատու գործը:

20 Վ. Ահարոնեան, Աշ. աշխ., էջ 45:

ինձ էլ դիմում էր, որ իր հաշուին այսինչ մարդուն գիրք տամ: Ես շատ էի չարանում եւ համոզում էի Թումանեանին, որ այդպիսի բաներ չանէր... Իսկ դուք ի՞նչ էք անում, ձրի բաժանում էք գրքերը ամէնքին, եւ ի՞նչ է լինելու սրա վերջը»²¹:

Իշխանուհին փորձում է տպագրանակը ամբողջութեամբ վաճառքի յանձնելով՝ օգնել բանաստեղծին: Սակայն բանաստեղծն անվերջ միջնորդութիւն-դիմումներ է անում, որ նա անվճար տրամադրի իր գրքերը ծանօթ-անծանօթ բոլոր ցանկացողներին: «Յուսահատուած, - պատմում է իշխանուհին, - ես հաւաքեցի ինձ մօտ մնացած գրքերը եւ ուղարկեցի նրան մանրամասն հաշուետուութեամբ... նա շարունակեց անմիտ կերպով ցրել գրքերը եւ նրա աշխատանքը միայն այն էր, ինչ որ ստացել էր ինձանից եւ գրախանութներից կանխիկ դրամով»²²: Շուրջ վեց տասնեակ պարտատէր ունեցող բանաստեղծն, իհարկէ, դէմ էր, որ գիրքը վաճառուէր ու եկամուտ բերէր, սակայն շտապում էր նուիրել, չէր ուզում եւ չէր կարող սպասել դրանց վաճառուելուն: Նման պահուածքով Թումանեանը միայն խանգարեց իր բարեկեցութեան խնդիրներով մտահոգուած մտերիմներին գէթ որոշ ժամանակով նիւթապէս ապահովել իրեն:

1909-1912 թթ. իշխանուհին նախաձեռնեց եւ իրականացրեց «Մանկական գրադարան» մատենաշարի 15 պատկերազարդ գրքոյկների հրատարակութիւնը՝ Ռոտտերի, Գ. Երիցեանի նկարազարդումներով, այդ թւում «Աղուէսը», «Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականները», «Անյաղթ աքլորը», «Ուլիկը», «Ծիտը», «Խօսող ձուկը», «Տէրն ու ծառան» «Գիւրը» եւ այլն: Դրանք տպագրուում էին այն

օրերի համար բաւական մեծ քանակով. օրինակ՝ «Ծիտը» տպագրուել է 2400 տպագրանակով: Երկերի հրատարակութիւնը սկսելուց առաջ, զգուշանալով բոլոր գրքերի գրեթէ ողջ տպագրանակը նուիրելու Թումանեանի սովորութիւնից, իշխանուհին նախօրօք հեղինակին պարտաւորեցնում է աւելին չպահանջել. «Ստորագրութիւն վերցրի նրանից հետեւեալ բովանդակութեամբ. Համաձայն եմ հեղինակին յատկացուած 50-ին եւ ոչ մի բանի չեմ խառնուելու. Յ.թ. 1908.1.11»²³, - գրում է Մարիամ Թումանեանը եւ շարունակում. «Ես յոյս ունէի, որ այդ ստորագրութիւնից յետոյ Թումանեանը կը զսպի իրեն, եւ ես հնարաւորութիւն կուենեամ նրա համար մի պատկառելի գումար հաւաքել, բայց նա շարունակեց ըստ իր սովորութեան ձրի բաժանել գրքոյկները, եւ իմ բոլոր ջանքերը իզուր անցան: Տեսնելով, որ Թումանեանն անողորմ է, ինձ մնում էր միայն այլեւս չվրդովուել ու մատների արանքով նայել այդ թուրութեանը»²⁴:

Բանաստեղծն իր մանկական գրքերը այնպէս էր նուիրում, որ ոչ մի օրինակ չէր մնում տանը: 1923 թ. Մոսկուայում պէտք է հրատարակուէին «Մի կաթիլ մեղրն» ու «Շունն ու կատուն». գրողի տանը ոչ մի օրինակ չէն գտնում: Բանաստեղծի կինը՝ Օլգան, պատմում է, թէ ինչպէս 1893 թ. լոյս տեսած «Դաշնակներ» գրքոյկի օրինակները ամէն առաւօտ լցնում էր իր երկար վերարկուի «մեծ» գրպանները եւ բաժանում բառիս լայն իմաստով ամէն պատահած ծանօթի, «իրիկունը դատարկ գալիս տուն... տարիներ յետոյ, եթէ որեւէ մէկի մօտ գտնում էր, ետ էր վերցնում, բերում, որ պահի գրադարանում» (ԹժՀ, էջ 341):

21 Մարիամ Թումանեան, Իմ համարում կենսագրութիւնը, Եր., 2003, Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատ., էջ 125:

22 Նոյն տեղում, էջ 126:

23 Նոյն տեղում, էջ 131:

24 Նոյն տեղում:

Իհարկէ, գրողի շրջապատի համար գաղտնիք չէր գրքի նրա պաշտամունքը, եւ այդ պատճառով էլ յաճախ էր մտերիմ բարեկամներից կամ պարզապէս ծանօթներից եւ նոյնիսկ անծանօթներից արժէքաւոր գրքեր նուէր ստանում: Այսպէս, 1921 թ. Բաթումից մի ուսուցիչ Թումանեանին նուիրում է 21 մեծադիր էջ կազմող Լերմոնտովի մենամարտի պատմութիւնը՝ «Дело о дуэли Лермонтова» գիրքը: Թումանեանն այդ գիրքը Գրչի մշակների ընկերութեան կողմից ուղարկում է Մոսկուա՝ Ա. Լուկաչարսկուն՝ առաջնորդուելով այն սկզբունքով, որ «Լերմոնտովին վերաբերող գործերը պէտք է կենտրոնանան Մոսկուայում»: Այդ գիրքն այսօր պահպանւում է Պետերբուրգի Ռուս գրականութեան ինստիտուտում (ԹԺՀ, էջ 239): Ի վերջոյ, ամենաարժէքաւոր նուէրը, որ նա արեց հայ ժողովրդին, Սայաթ-Նովայի ժառանգներից նուէր ստացած «Դաւթարն» էր, որ նուիրեց Հայաստանի Գրականութեան եւ արուեստի թանգարանին (ներկայումս՝ Եղիշէ Չարենցի անուան)՝ հակառակ «Հայ գրչի մշակների» վարչութեան նիստի որոշման եւ ընդդիմանալով Լէոյի եւ այլոց կարծիքին, որոնք կամենում էին, որ «Դաւթարը» մնայ Թիֆլիսում՝ իրենց տնօրինութեան տակ:

Թումանեանին մտահոգում էր նաեւ գրախաւնութեան խնդիրը, յատկապէս այն, որ գրավաճառները մեծ տոկոսներ են վերցնում հեղինակներից (60 տոկոս), ինչպէս օրինակ՝ «Գուտտենբերգը», Կենտրոնական եւ Չաքարիա Գրիգորեանի գրախանութները: Հէնց գրա համար, նաեւ հեղինակային իրաւունքները պաշտպանելու նպատակով բանաստեղծը դառնում է «Գիր» գրախանութի հիմնադիրներից մէկը:

Թումանեանի սէրը գրքի նկատմամբ այնքան մեծ էր, որ ազգային ու անձնական կեանքի ամենածանր պահերին անգամ նա չէր անտեսում գրախրատարակչա-

կան խնդիրները. բազմիցս տարբեր յօդուածներում խորհուրդներ էր տալիս, թէ ինչպիսին պիտի լինեն հայերէն թարգմանուած երկերը, ինչ է անհրաժեշտ հրատարակել, ինչպիսին պէտք է լինի գրքի արտաքին տեսքը, եւ միշտ պահանջում էր լեզուական անսխալ ու անթերի տպագրութիւն: 1908 թ. Բաքուի «Բանաստեղծութիւններ» ժողովածոյի մտերիմ բարեկամ ընկերներին անուանեց «խալտառակիչներ», քանի որ այնտեղ սպորդել էին մի շարք վրիպակներ, իսկ ինքը՝ որպէս հեղինակ, մի քաղաքից միւսը չէր կարողացել հսկել տպագրութիւնը, թէեւ հէնց այդ առիթով հասել էր Բաքու՝ հետեւելու գրքի տպագրութեանը, սակայն այդ ընթացքում բանտարկուել էր եւ միայն բանտախցում էր տեսել իր գրքի ազդօրինակը: Թումանեանը գրում է. «Ձեռքս ընկաւ իմ բանաստեղծութիւնների գիրքը, ուշադիր կարդացի եւ զարմանքով տեսայ, որ ամբողջ գիրքը փչացրել են մարդիկ եւ փոխանակ հրատարակիչների, դարձել են իմ խալտառակիչները» (ԵԼԺ 10, էջ 80):

Բանաստեղծը որոշակի գործունէութիւն է ծաւալել գիրքն ու գրականութիւնը տարածելու, հասարակութեանը աւելի մատչելի դարձնելու ուղղութեամբ: Կովկասի հայոց հրատարակչական ընկերութեանը նա առաջարկում էր կազմել եւ հրատարակել կովկասեան հանրագիտարան, ստեղծել եւ հրատարակութեան պատրաստել լիակատար հայոց պատմութիւն. 1908 թ. բարձրացրեց եւ քննարկման նիւթ դարձրեց Թիֆլիսում հայոց ազգային կենտրոնական գրադարան ստեղծելու խնդիրը: Հայութեան մտաւոր կենտրոններից մէկում ազգային գրադարանի բացակայութիւնը նա համարում էր աննորմալ երեւոյթ: Թումանեանը գրում է. «Ամէն մի ինտելիգենտ մարդ չի կարող իրեն համար կազմել այնպիսի գրադարան, որ միշտ պատասխանէր նրա հարցերին, բայց մի հասարակութիւն կարող է այդ անել... նա կարող է եւ պէտք է Թիֆ-

լիսում ունենայ մի ազգային գրադարան, ուր հաւաքուած լինին հայոց բոլոր հին մատենագիրները, ամբողջ նոր գրականութիւնը, Արեւելքին, Կովկասին եւ հայ ժողովրդին վերաբերեալ ամէն տեսակ ուսումնասիրութիւններ» (ԵԼԺ 6, էջ 157): Հրապարակագիր եւ գործիչ Թումանեանը երբեք անհիմն առաջարկութիւններ չէր անում. նա, հրաւիրելով հասարակութեան ուշադրութիւնը որեւէ խնդրի վրայ, միշտ մատնացոյց էր անում կոնկրետ ուղիներ, որոնցով կարելի էր հասնել նպատակի իրականացմանը: Այդ պատճառով նրա կոչերն ու առաջարկները միշտ հասարակական արձագանք էին գտնում: Գրողի «Հայոց ազգային կենտրոնական գրադարան Թիֆլիսում» յօդուածին արձագանքում է Սմբատ Տէր-Աւետիքեանը՝ իր «Մատենադարանի կարիքը կայ» թղթակցութեամբ²⁵: Ձեռնարկում են կոնկրետ քայլեր. Լէօի նախագահութեամբ եւ Լ. Բաբայեանի քարտուղարութեամբ ստեղծուած է մի մասնաժողով՝ գրադարանի հարցերով զբաղուելու համար²⁶:

Թումանեանի ընթերցած գրքերը նրա ստեղծագործական կեանքի ուշագրաւ վկաներն են եւ անմիջականօրէն կապում են նաեւ նրա կենսագրութեան, երկերի եւ թարգմանութիւնների պատմութեան հետ, քանի որ դրանց զգալի մասը ազգակ է հանդիսացել կամ պարզապէս օգտակար է եղել գեղարուեստական որեւէ գործ ստեղծելու կամ թարգմանելու համար:

Նոյնիսկ գեղարուեստական երկերում գրողն անդրադառնում է խնդրի կարեւորութեանը եւ կենդանիների կեանքից պատմուածքների շարքում («Շունը», «Գէլը» եւ այլն) խոստովանում է, որ ընթերցանութիւնը, գրքերից գիտելիք ամբարելը որքան կարեւոր է եղել իր համար եւ ընդգծում է

կենդանիների վարքագծի ու բնութեան մասին գրքերի օգտակարութիւնը ամէնքի համար: «Շունը» պատմուածքում գրում է. «Ես մեծացայ, զանազան գրքեր կարդացի, նոր-նոր բաներ իմացայ ու սովորեցի: Ու ինչքան սովորեցի՝ էնքան էլ տեսայ, որ ես շատ ու շատ քիչ բան գիտեմ: Շան մասին էլ կարդացի: Համ կարդացի, համ լսեցի, համ կեանքում տեսայ, եւ հա էդ բոլորից յետոյ հիմի գրում եմ» (ԵԼԺ 5, էջ 134-135): Իսկ «Լուսերեսն ու Վարդերեսը» հեքիաթում գրում է, որ Լուսերեսը, երբ գործ էր ունենում, իր մայրիկի համար գիրք էր կարդում, նաեւ. «Մէրը գիրք էր կարդում աղջիկների համար, իսկ աղջիկները լսում էին ու մանում» (ԵԼԺ 5, էջ 328): Եւ կարծես երեխաների կողքին պառկած գառն ու թռուիկն քնած սպիտակ աղաւնին նոյնպէս ունկնդրում էին գրքի բովանդակութիւնը: Բազմիցս իր երկերում ազգային բանաստեղծն արտայայտում էր հայապահպանման գործում մեարդեան գրի ու գրքի անփոխարինելի դերը: «Թէպէտ եւ բախտը մեզ շատ հարուածեց» քերթուածում (1913) գրում է.

Թէպէտ եւ բախտը մեզ շատ հարուածեց
Երկար դարերով, ահեղ հարուածով,
Թէպէտեւ էսպէս ցրուեց, տարածեց
Ձրգեց հողէ հող, փրուեց ծովէ ծով,
Վկայ է սակայն բովանդակ երկիր,
Որ մեզք կարեւր ապրում ենք կրկին,
Եւ ուր հասնում է հայի գիրքն ու գիր -
Կեանքանի է դեռ հայութեան ոգին
(ԵԼԺ 1, էջ 264):

Ուշագրաւ է, որ այս բանաստեղծութիւնը Թումանեանը գրել է հայ տպագրութեան 400-ամեակի եւ գրքերի ստեղծման 1500-ամեակի տօնակատարութիւնների առիթով եւ այն անձամբ կարդացել է այդ առիթով 1913 թ. հոկտեմբերի 13-ին Ներսիսեան դպրոցում կազմակերպուած երեկոյթին աշակերտների համար: Մաշտոցին ու Սահակ Պարթեւին բնորոշելով իբ-

25 «Վտակ», 1908, մարտի 13, թիւ 57:
26 Նոյն տեղում, ապրիլի 26, թիւ 87:

րեւ «Հոյակապ սիւներ հայութեան ոգու»՝ բանաստեղծութիւնը աւարտում է հետեւեալ տողերով.

Եւ թող իմանայ բովանդակ երկիր -
Ապրում է աճմեռ հայութիւնը հիւ,
Ապրում եմ աճման իրեմ գիրքն ու գիր
(ԵԼԺ1, էջ 265):

Կեանքի վերջին ամիսներին քաղցկեզի ցաւերով անկողնուն գամուած բանաստեղծը ընթերցելու անյագ ցանկութիւն ունէր, ինչպէս վկայում է դուստրը. «Թէեւ հիւանդ էր, բայց կարդալու... մեծ տրամադրութիւն ունէր. Հետաքրքիր եւ նոր գրքերի պահանջ էր զգում: Մենք ամէն օր նոր գրքեր էինք գնում, բերում: Հէնց որ մենակ էր լինում ու ինքն էլ տրամադիր՝ երեկոները գիրք էր կարդում» (ՅԶ, էջ 285): Նուարդը գրում է, որ 1923 թ. յունուարի 23-ին՝ «առաւօտը նոր գրքեր ուզեց կարդալու, մենք գնել էինք վերահրատարակուած, բայց ոչ այնքան հետաքրքիր գրքեր, դժգոհեց. «Լա՛ւ գրքեր բերէք, մնայուն, մարդուն իսկոյն կլանող, կենտրոնացնող գրքեր...»: Ու նորից խօսեց մեծ գրողներից, բանաստեղծներից, որոնք միշտ նոր են ու մնայուն» (ՅԶ, էջ 289-290): Թէեւ Դոստոեւսկու դատեր յուշերի գիրքը չէր հաւանել, երբ մի քանի օր առաջ նրա համար կարդացել էին, սակայն կարծում էր, որ, այնուամենայնիւ, արժէքաւոր է, քանի որ աղջիկն է գրում հօր մասին: 1923 թ. յունուարի 28-ին խնդրում է, որ իր համար կարդան գրքի վերջին՝ բանաստեղծի մահուանը վերաբերող գլուխը (ՅԶ, էջ 291):

Մահից մօտ մի ամիս առաջ յիշում էր, թէ ինչպէս ու ինչ խնամքով է ձեռք բերել իր գրադարանը: Ասում էր. «Բոլոր ժողովուրդների հեքիաթները հաւաքել եմ, բոլոր հրատարակութիւններն իր ժամանակին գնել, պահել... Սիտինի, Կնեբելի, Վոլֆի կլիշէները - ինչէր կարելի է հրատարակել,

ինչ հնարաւորութիւններ կան, ինչ յարմարութիւններ» (ՅԶ, էջ 297):

Աւելին, նոյնիսկ անդրադառնում էր հրատարակչական գործի կարեւորութեանը՝ սակեով. «Հրատարակութեան գործը շատ դժուար գործ է. եւ գրողի համար աւելի լաւ բան չկայ, քան գրի ու ստանայ իր հասանելիքը: Հրատարակութեան գործում ձեւը, ճաշակը եւ այլն արդէն գրողի իրաւունքն է» (ՅԶ, էջ 297): Կեանքի վերջին օրերին նրա համար կարգում էին Նապոլէոնի, հանճարեղ գրողների եւ առհասարակ մեծ մարդկանց մասին (ՅԶ, էջ 298): Մարտի 7-ին, երբ բժիշկներն արդէն մորֆին էին սրսկում, երկու ժամը մէկ էլ՝ պանտալոն, գաւակները նրա համար կարդացին Վիեննայում նոր լոյս տեսած Ռաբինդրանադ Թագորի «Պարտիզականը»՝ որդու՝ Համլիկի թարգմանութեամբ: «Հայրիկը շատ ուրախացաւ, յուզուեց, աչքերը լցուեցին, պենսնէն դրեց աչքերին, գիրքը վերցրեց ու սկսեց թերթել: Գիրքը արտաքուստ շատ հաւանեց: Կարդացինք առաջաբանը, այնքան էլ չհաւանեց» (ՅԶ, էջ 306):

1923 թ. փետրուարի 16-ին, երբ այլեւս չէր կարողանում կարդալ եւ գրողի համար ուրիշներն էին ընթերցում, ասես վերջին անգամ պատգամում էր սերունդներին. «Պետք է կարդալ, միշտ կարդալ. եւ ամէն մի կարդալը մի բան է տալիս ու աճկատելի կերպով ամբարտում, բան դառնում» (ՅԶ, էջ 298):

Պարոյր Սեւակն այնքան անվրէպ ու յստակ է ձեւակերպել թումանեան-ուսումնասիրողի՝ գրասէր-ընթերցողին տուածր բարձր գնահատականը, որ նրա հետ չհամաձայնուելն անհնար է: Հէնց գիրք կարդալով, ինքնակրթուելու շնորհիւ թումանեանը ձեռք բերեց, Սեւակի խօսքերով, «մի այնպիսի պատմական մտածողութիւն, ինչը մեծագոյն պատիւը կարող է դառնալ ամէն մի մեծ պատմաբան-պատմագէտի: Իսկ պատմական մտածողութիւն ասուածը

ոչ այնքան գիտելիքների շատութիւն է ենթադրում, որքան բնածին խելք, ոչ այնքան ընդունակութիւն, որքան ունակութիւն»²⁷ (ընդգծումը հեղինակինն է - Ս. Յ.):

Եւ իրօք, թումանեանը այդպէս էլ չկարողացաւ ստանալ բարձրագոյն կրթութիւն, սակայն արտասահմանում կրթուած, յետագայում ակադեմիկոսի կոչմանն արժանացած եւ ոչ մի ընդդիմախօս չկարողացաւ յաղթել նրան: Յանկացած բանավէճում բանաստեղծին առաջնորդում էին թէ՛ գիտելիքները, որոնք նա ձեռք էր բերել ինքնակրթութեամբ, հազարաւոր գրքերի ընթերցանութեամբ, թէ՛ «բնածին խելքով» ու նաեւ «բնազդով» իրերն ու իրողութիւնները ճշմարիտ լոյսի ներքոյ տեսնելու, դրանց հեռանկարները զգալու, կռահելու ունակութիւնը: «Դժուար է չասել,- շարունակում է Սեւակը,- որ թումանեանն է մեր նոր գրականութեան ամենախելօքը՝ բոլոր զարգացածների մէջ եւ ամէնից ունակը՝ բոլոր ընդունակների մէջ: Նա չի աւարտել Ներսիսեանը, ուր մնաց թէ Լազարեանը, ոչ էլ ուսանել է Վենետիկում: Բայց տեսէ՛ք, թէ ինչպէս է բանավիճում Աճառեանի, Մառի, Աբեղեանի հետ եւ բանակուում բազմաթիւ ուսեալ, համալսարանաւարտ անուանի գործիչների հետ՝ Արծրունուց մինչեւ Արասխանեան, Խալաթեանցից մինչեւ Մակինցեան» (ընդգծումը հեղինակինն է - Ս. Յ.)²⁸:

Այսպէս, ինքնակրթութեամբ, մի կեանքի համար վիթխարի քանակութեամբ արժէքաւոր գիտական եւ գեղարուեստական գրականութեան ուսումնասիրութեամբ թումանեանը հասաւ մեծ արդիւնքների, աւելի մեծ, քան բազմաթիւ համալսարանաւարտներ: Նա գիտական աշխատութիւնների հեղինակ դարձաւ, լուրջ աւանդ թողեց Հայագիտութեան եւ մեր մշակոյթի ողջ պատմութեան մէջ:

Զգալով ու գիտակցելով գրքի վիթխարի դերն ինչպէս իր, այնպէս էլ հասարակութեան կեանքում, իւրաքանչիւր հարցում չափի՝ ոսկէ սանձի ու ներդաշնակութեան պաշտամունք ունեցող բանաստեղծը բարութիւն շուայլելիս, գիրք նուիրելիս սահման չէր ճանաչում եւ դառնում էր սահմանախախտ՝ յարուցելով շրջապատի երախտագիտութիւնն ու հիացմունքը, միաժամանակ՝ շատերի դժգոհութիւնն ու զարմանքը: Հէնց գիրք նուիրելու անսովոր սովորութեանը տուրք տալով՝ Հայոց մեծ բանաստեղծի ծննդեան օրը՝ փետրուարի 19-ը, հայ մշակոյթի պատմութեան մէջ ամրագրուեց իբրեւ գիրք նուիրելու օր, երեւոյթ, որը եզակի է ու բացառիկ թերեւս ամբողջ աշխարհում:

27 Պ. Սեւակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հտ. 5, Եր., 1974, էջ 365:
28 Նոյն տեղում, էջ 365-366: